ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի

Ղեկավարի 2012թ-ի տարեկան

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ 2012թ-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվել է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու գողությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում :

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր-Տարին դիմավորելու համար զարդարվել է համայնքի հրապարակում գտնվող հուշարձանին հարակից եղևնիները:

Տարեսկզբին նոր-տարվա առիթով կազմակերպվեց Ձմեռ պապու այցելությունը բնակիչների տները և 1-ից մինչև 6 տարեկան երեխաներին բաժանվեց նվերներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի շնորհիվ փետրվարի 13-ին Տյարընն ընդառաջի տոնի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում համայնքի թվով 22 նորապսակների եկեղեցում կատարվեց ծիսակատարության կարգը այնուհետև արարողությունը շարունակվեց

համայնքի կենտրոնում արարողակարգի համաձայն, նորապսակներին բաժանվեցին նվերներ:

Միջոցառմանը ներկա էին երկիր մեդիա հեռուստաընկերության լրագրողները, միջոցառումը նկարահանվեց և ցուցադրվեց:

Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմը, ինչպես նաև համայնքից այլ բնակիչներ ապրիլի 24-ին այցելել և ծաղկեպսակ են դրել եղեռնի զոհերի հուշարձանին:

Մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա արթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ պարգևատրումներ է հանձնվել հայրենական պատերազմի վետերաններին:

Ավագանու հաստատմամբ սոցիալական օգնություն է տրվել համայնքի թվով 40 առավել անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանի միջոցներով կառուցվում է բուժկետ, որի շինարարական աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

2011թ.-ի ընթացքում համայնքում կատարվել են բավական աշխատանքներ կոմունալ ծառայությունների բնագավառում:

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2012թ-ի աշնանային զորակոչի համար ավտոդպրոցում նախապատրաստվել և զորակոչվել են երեք զորակոչիկ, և մեկնել են զինծառայության: 2012թ-ի զորակոչի պլանը կատարվել է 100%-ով:

Հաշվետու տարում համայնքում կատարվել է կենդանիների համաճարակային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբաղի և բրոցիլոզի դեմ: Կազմակերպվել և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-անգամ շաբաթական 1-օր:

Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխատանքներ:

Աշխատանքներ են կատարվել Վաղարշապատի ՋՕՄ-ի հետ համայնքի Ուրց-Կոտայք Շամիրամ գոտուց օգտվող ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար:

Աշխատանքներ են կատարվել համայնքի Քասախ գետից սնվող Սարի-Առու կոչվող ջրատարները մաքրելու և որոշակի մասերում բետոնապատման աշխատանքներ կատարելու ուղղությամբ:

Ժամանակին կազմակերպվել է հացահատիկի բերքահավաքը: Առանց խոչնդոտների կազմակերպվել է խաղողի բերքահավաքի և մթերման աշխատանքները: Այն խաղողագործները ովքեր չեն ունեցել պայմանագիր խաղողի մթերման համար համայնքի ղեկավարի միջնորդությամբ մթերել է Էջմիածնի գինու գործարանում:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկտեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչնդոտում են գյուղատնտեսության զարգացմանը:

Առ. 31.12.2012թ-ի դրությամբ բյուջեն կատարվել է 97 -ով

հողի հարկ ------6360.0	կատարողական----6552.0
գույքահարկ------1703.3	կատարողական-----1513.1
շինություն------403.3	կատարողական-----158.1
փոխադրամիջոց-----1300.0	կատարողական--- 1355.0
վարձակալական հողերի վարձ----1100.0	կատարողական---873.9

Այգեշատի գյուղապետարանի

Այգեշատ համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Հովսեփյան

Առաջատար մասնագետ՝ Գայանե Մկրտչյան